ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/33/2022

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 25 հուլիսի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի և Մարիամ Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի հուլիսի 25-ին, քննելով ՀՀ Գետաշեն համայնքի ղեկավարի նախկին տեղակալ Գուրգեն Եղիշեի Ավետիսյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2022 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում, ինչպես նաև Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու փաստերի առթիվ 2022 թվականի հուլիսի 6-ին հարուցված թիվ ՎԻՎ/33/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով պարզել է, որ ՀՀ Գետաշեն համայնքի ղեկավարի նախկին տեղակալ Գուրգեն Ավետիսյանի 2022 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Գուրգեն Ավետիսյանը պաշտոնեական պարտականությունները դադարեցրել է 2022 թվականի փետրվարի 22-ին: Հանձնաժողովի կողմից 2022 թվականի ապրիլի 25-ին Գուրգեն Ավետիսյանին գրավոր ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը չներկայացնելու

վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել Հայտարարագիրը: Նշված ծանուցումը Գուրգեն Ավետիսյանի կողմից ստացվել է 2022 թվականի մայիսի 2-ին: Սակայն, ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Հայտարարագիրը չի ներկայացվել:

1.3 Հանձնաժողովի՝ 2022 թվականի հունիսի 6-ի թիվ 01/1232/5-2022 գրությամբ Գուրգեն Ավետիսյանը 2022 թվականի հուլիսի 1-ին՝ ժամը 12:30-ին հրավիրվել է մասնակցելու նշված փաստերի առնչությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը:

1.4 2022 թվականի հուլիսի 1-ին Գուրգեն Ավետիսյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ 35/22 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.5 Հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/33/22 գործի վարույթը: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը՝ վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին նշումով, համապատասխան ուղեկցող գրությամբ փոստային առաքման միջոցով ներկայացվել է Գուրգեն Ավետիսյանին:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Գուրգեն Ավետիսյանի մասնակցությամբ 2022 թվականի հուլիսի 25-ին՝ ժամը 16:00-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

1.6 2022 թվականի հուլիսի 25-ի դրությամբ Գուրգեն Ավետիսյանի կողմից չի ներկայացվել 2022 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիրը:

II. Վարույթի մասնակցի բացատրությունը

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում Գուրգեն Ավետիսյանը ներկայացրեց բացատրություն առ այն, որ ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված համայնքների խոշորացման գործընթացի արդյունքում տեղի է ունեցել մի քանի համայնքների միավորում, այդ թվում նաև՝ ՀՀ Գետաշեն համայնքի, որի արդյունքում իր՝ որպես ՀՀ Գետաշեն համայնքի ղեկավարի տեղակալի, պարտականությունները դադարեցվել են: Հայտնեց, որ Հանձնաժողովի կողմից 2022 թվականի ապրիլի 25-ին Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ իրեն ուղարկված գրավոր ծանուցումը չի ստացել և հետևաբար 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի

միջոցով էլեկտրոնային եղանակով չի ներկայացրել Հայտարարագիրը: Վերջինս հայտնեց նաև, որ չի ստացել նաև վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը մասնակցելու վերաբերյալ ծանուցումը և հնարավորություն չի ունեցել մասնակցելու նշված փաստերի առնչությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանն ու ներկայացնել իր բացատրությունը:

Գուրգեն Ավետիսյանը հայտնեց, որ վերոնշյալ ծանուցումները ստանալու փաստը հավաստող՝ փոստային ծառայության կողմից տրամադրվող, ստացման հավաստագրերը իր կողմից չեն ստացվել: Գուրգեն Ավետիսյանը հավելեց նաև, որ ստացել է միայն Հանձնաժողովի կողմից 2022 թվականի հուլիսի 11-ի թիվ Ե-01/1598/-2022 գրությունը, որով տեղեկացել է իր նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/33/22 վարույթի հարուցման մասին:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/33/22 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 ՀՀ Գետաշեն համայնքի ղեկավարի նախկին տեղակալ Գուրգեն Ավետիսյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2022 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

3.2 2022 թվականի հուլիսի 25-ի դրությամբ Գուրգեն Ավետիսյանի կողմից չի ներկայացվել 2022 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիրը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ Գետաշեն համայնքի ղեկավարի նախկին տեղակալ Գուրգեն Ավետիսյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

4.2 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն

ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացվում են Հանձնաժողով:

4.3 «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի հունվարի 19-ի ՀՕ-51-Ն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք տարեկան հայտարարագրում ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն առաջին անգամ ներկայացնում են 2021 թվականի տարեկան հայտարարագրում՝ 2022 թվականի հունվարի 1-ից: 2021 թվականի հունիսի 1-ից հետո պաշտոնեական պարտականությունները դադարեցրած անձինք պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագրում ներկայացնում են նաև ծախսերի վերաբերյալ տեղեկություններ:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 169.28 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.8 Օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման նույն հոդվածի 1-ին կետով սահմանված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման դեպքի*** կամ կազմի ***բացակայությունը***:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.12 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ *իրավախախտան դեպքը բացակայում* է հետևյալ պատճառաբանությամբ.

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացվում են Հանձնաժողով:

ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված համայնքների խոշորացման գործընթացի շրջանակներում տեղի ունեցած համայնքների, այդ թվում նաև՝ ՀՀ Գետաշեն համայնքի այլ համայնքների հետ միավորման արդյունքում ՀՀ Գետաշեն համայնքի ղեկավարի նախկին տեղակալ Գուրգեն Ավետիսյանի պարտականությունները դադարեցվել են 2022 թվականի փետրվարի 22-ին: Վերոնշյալ իրավանորմի դրույթների համաձայն՝ Գուրգեն Ավետիսյանը կրում է պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում Հանձնաժողովի կողմից Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ

ուղարկված գրավոր ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն:

Անդրադառնալով վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում Գուրգեն Ավետիսյանի ներկայացրած բացատրությանը համաձայն որի՝ վերջինս չի ստացել Հանձնաժողովի կողմից 2022 թվականի ապրիլի 25-ին Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ իրեն ուղարկված գրավոր ծանուցումը և հետևաբար 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով չի ներկայացրել Հայտարարագիրը, ինչպես նաև չի ստացել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը մասնակցելու վերաբերյալ ծանուցումը և հնարավորություն չի ունեցել մասնակցելու նշված փաստերի առնչությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանն ու ներկայացնել իր բացատրությունը, նիստը նախագահողը ներկայացրեց, որ գործի նյութերում առկա են ինչպես հայտարարագիրը 30-օրյա ժամկետում ներկայացնելու, այնպես էլ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը հրավիրելու մասին ծանուցումները:

Այս կապակցությամբ Գուրգեն Ավետիսյանը նշեց, որ նշյալ ծանուցումները ստանալու փաստը հավաստող՝ փոստային ծառայության կողմից տրամադրվող, ստացման հավաստագրերը իր կողմից չեն ստացվել: Գուրգեն Ավետիսյանը հավելեց նաև, որ ստացել է միայն Հանձնաժողովի կողմից 2022 թվականի հուլիսի 11-ի թիվ Ե-01/1598/-2022 գրությունը, որով տեղեկացել է իր նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/33/22 վարույթի հարուցման մասին:

Հանձանաժողովը, հիմք ընդունելով Գուրգեն Ավետիսյանի բացատրությունը, համադրեց գործի նյութերում առկա ծանուցումներում առկա ստորագրությունները վարույթի մասնակցի իրական ստորագրության հետ, ըստ այդմ՝ արձանագրեց, որ դրանք նույնական չեն:

Նշված հանգամանքով պայմանավորված՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից համապատասխան հայտարարագիրը Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա ներկայացնելու մասին համապատասխան գրությունը չի ստացվել Գուրգեն Ավետիսյանի կողմից, ուստի վերջինս հնարավորություն չի ունեցել այն ստանալոց հետո 30 օրվա ընթացքում ներկայացնել 2022 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիրը: Հետևաբար, Հայտարարագիրը Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո Հանձնաժողովի

գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու խախտման դեպքը չի կարող հաստատված համարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 247-րդ և 283-րդ հոդվածներով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2022 թվականի հուլիսի 6-ին Գուրգեն Ավետիսյանի նկատմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/33/22 գործի վարույթը կարճել՝ իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գուրգեն Ավետիսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**